«ՎԱՐՔ ԵՎ ԳՈՐԾՔ»

Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Մեսրոպ եպիսկոպոս Գրիգորյանը գեղեցիկ մտահղացումն է ունեցել այս գեղակազմ գրքույկով իր հոգու նվերը բերել Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ Նորին Սրբության գա-



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԽՕՍՔԸ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ
ԵՐԵՍՆԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ
30 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1985 Թ.



ՎԱՐՔ ԵՒ ԳՈՐԾՔ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
ՏԷՐ ՏԷՐ ՎԱԶԳԷՆ Ա.
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՇՆՈՐՀԱԶԱՐԴ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԴՐ. ՄԵՍՐՈՊ Ծ. ՎՐԴ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

հակալության երեսնամյակի առթիվ:

40 փոքրադիր էջերի վրա համատեղված են Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի խոսքը՝ արտասանված 1985 թ. սեպտեմբերի 30-ին Վեհարանի մեծ դահլիճում, Նորին Սրբության գահակալության հանդիսավոր երեկոյին: Վեհափառ Հայրապետի խոսքը հրատարակվեց «Էջմիածին» ամսագրում և ըստ յուրաքանչյուր մամուլում, բայց այս գրքույկը լավագույն միջոցն է մշտապես ձեռքի տակ ունենալու Վեհափառի խոսքը, որտեղ Նորին Սրբությունը փորձ է անում ընդհանրացնելու իր երեսնամյա գործունեության բոլոր երեսները, գնահատելու մեր ժողովրդի պատմության ներկա իրավիճակը՝ խորհրդային ծաղկուն հայրենիքով, բարգավաճող Մայր Աթոռով և տարապայման Սփյուռքի ազգային ինքնապահպանման ճիգով, տարամիտող ճիգերով և, վերջապես, համագործակցության ու միասնական պայծառ ապագայի հույսով:

Մեսրոպ սրբազանը նաև ինքն է շարադրել Վեհափառ Հայրապետի «Վարք և գործք»-ը՝ տալով կենսագրական տեղեկություններ Նորին Սրբության կյանքի և երեսնամյա գործունեության մասին: Մեսրոպ սրբազանը կարողացել է լավագույնս ի մի բերել Վեհափառ Հայրապետի գործունեության կարևոր ձեռքբերումները և իր ակնածալի վերաբերմունքը ցույց տալ Նորին Սրբության հայրենանվեր և եկեղեցանվեր գործունեության նկատմամբ: Հետաքրքրական է և այն, որ Մեսրոպ սրբազանը Վեհափառ Հայրապետի գործը նկարագրել է մեր Եկեղեցու պատմության մեծերի կյանքին առընթեր՝ Գրիգոր Վկայասերի, Խաչիկ Անեցու, Փիլիպպոս Աղբակեցու, Ներսես Աշտարակեցու, Խրիմյան Հայրիկի և այլ նվիրական անունների գործին իբրև շարունակություն. «Ան առաքելաշավիղ ու արժանավոր հաջորդ մը հանդիսացավ Սուրբ Գրիգոր Լուսավորչի, Հովհան Օձնեցիի, Ներսես Շնորհալիի, Մովսես Տաթևացիի, Ներսես Աշտարակեցիի և այլ ընտիր հայրապետներու»:

Մեսրոպ սրբազանը այս գրքույկում հրատարակել է նաև Մայր Աթոռի Դիվանի հաղորդագրությունը (6 հոկտեմբեր 1985), հայտարարությունը (2 հոկտեմբեր 1985) և ընտրաքաղ Վեհափառ Հայրապետի մտքերից՝ եկրակացնելու համար «Իր գահակալության տարիներուն՝ Հայաստանյայց Եկեղեցին ապրեցավ վերանորոգության կազմակերպման և իկորացման բացառիկ շրջան մը»:

ԹՂԹԱԿԻՑ